

ՄԻՋԱԳԵՏՔԻ ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ՀԱՅ ՈՐԲԱԽՈՒՅՉՆԵՐԸ (1918-1923 ԹԹ.)

Բանալի բառեր – Ֆեյսալ, Ռ. Հերյան, Լ. Յոթնեղբարյան, Հայոց ցեղասպանություն, որբեր, տարագիրներ, Միջազգետքի անապատներ, որբախույզներ, արաբներ, ազգային ինքնություն, ազատագրում, փրկություն, մամուլ, ականատեսներ, հուշագրություններ

Երիտթուրքական կառավարության իրականացրած Հայոց ցեղասպանության ընթացքում հայ երեխաների վիճակը թերևս ամենաճանրն էր: Տարագրության ճանապարհը հաղթահարելուց հետո սիրիական անապատներում նրանց առջև ծառայած էր ոչ միայն վերապրելու խնդիրը, այլև մշտապես սպառնացող ձուլման վտանգը: Բազմահազար երեխաներ հայտնվում էին արաբական միջավայրում և աստիճանաբար կորցնում ազգային ինքնությունը: Թուրքական կառավարությունն իր հերթին էր իրականացնում հայ երեխաների թրքացման քաղաքականությունը: Նրանց փրկելու նպատակով ստեղծվեցին միջազգային և հայկական մեծ թվով կազմակերպություններ, ինչպես նաև այդ գործին նվիրվեցին անհատներ:

Սույն հոդվածի խնդիրն է հանգամանալի ներկայացնել անհատ որբախույզների գործունեությունը, ովքեր առաջնորդվում էին «Փրկենք անապատի որբերը» կարգախոսով: Նրանք գաղտնի, երբեմն բեղվիների տարազներով ծպտված, շրջում էին անապատներով, հայտնաբերում իրենց ազգակիցներին, նրանց ազատում արաբների և քրդերի «գերությունից» ու հանձնում որբախնամ կազմակերպություններին:

1918 թ. Հայկական բարեգործական ընդհանուր միության (այսուհետև՝ ՀԲԸՄ), Եգիպտահայ նպաստամատույցի և Միացյալ որբախնամի համատեղ որոշմամբ Նպաստի պատվիրակներ են նշանակվել և Սիրիա ուղարկվել Մկրտիչ Եփրեմյանը, Կարապետ Սեֆերյանն ու Ռուբեն Հերյանը¹ տարագրյալների վիճակն ուսումնասիրելու և նրանց կարիքների մասին նպաստա-

¹ Ռուբեն Հերյանը ծնվել է Եվդոկիայում 1869 թ., տեղի Ազգային վարժարանը ավարտելուց հետո մեկնել է Կ. Պոլիս, այնուհետև՝ Նյու Յորք: Իբրև Ռամկավար ազատական կուսակցության անդամ՝ նա ազգային ակտիվ գործունեություն է ծավալել, 1916 թ. հայ կամավորների հետ տեղափոխվել է Սիրիա, ուր Արևելյան լեզեոնի կազմում մասնակցել է մարտական գործողություններին: 1918 թ., երբ Արևելյան լեզեոնը տեղափոխվել է Պաղեստինի ճակատ, Ռ. Հերյանը տարիքի պատճառով չի ընդգրկվել զինվորական գումարտակում, ուստի որոշել է իր նպաստը բերել հայ որբերին ազատագրելու գործին: Մանրամասն տե՛ս Պատմություն Եւդոկիոյ Հայոց. Տեղագրական, պատմական եւ ազգագրական տեղեկություններով, Համադրուած Ա. Ալպոյաճեան, Գահիրէ, 1952, էջ 1731-1735:

մատույց¹ մարմիններին տեղեկացնելու համար²: Հայ որբախույզներից իր աշխատանքով ու հետևողականությամբ առանձնանում էր Ռ. Հերյանը, ով արաբների շրջանում հայտնի էր Մուֆեթեշ ալ-Արման (հայերի որբախույզ) անունով: Նա անդամ էր Մուշեղ արք. Սերոբյանի գլխավորած Միջագետքի հայ օգնության կոմիտեի, որը հանձնարարեց նրան Ադանայից մեկնել Դեր Ջոր և կազմակերպել հայ տարագիրների անվտանգ տեղափոխումը Հալեպ:

Ռ. Հերյանը Դեր Ջոր է հասել 1919 թ. մայիսի 18-ին, որտեղ, ինչպես ինքն է նշում «Ժողովուրդի ձայնը» թերթին տված հարցազրույցում, կար մոտ 400 տարագիր, որոնց հոգ էր տանում անգլիական կառավարությունը: Ռ. Հերյանը Ներգաղթի ֆրանսիական մարմնի ընդհանուր տնօրեն Մ. Կլուսքարի աջակցությամբ կազմակերպում է այդ տարագիրների տեղափոխումը Հալեպ³:

Այնուհետև, տեղում ուսումնասիրելով իրավիճակը Ռ. Հերյանը որոշում է զբաղվել արաբների և քրդերի մոտ գտնվող հայ կանանց ու երեխաների փրկությամբ: Որպես Միջագետքի հայ տարագիրների «Պաշտպան մարմնի» անդամ և «Որբահավաք» խմբի պատասխանատու՝ նա 1919 թ. հուլիսի 19-ին Դեր Ջորից գրել է. «Ոճրագործ քաղաքը կը գտնուիմ... հոս շատ գործ կա, տակալին հարիրաւոր որբեր կան արաբներու մօտ և ասոնց ազատուիլը, ըստ իս ամենայն մեծ աշխատասիրութիւնն է... ծրագիրս շատ խոշոր է... պիտի ջանամ բոլոր աշիրաթները պտտիլ և հաւաքել ինչքան կարելի ըլլայ... չնայած օղը շատ տաք է, բայց նպատակը անչափ բարձր է»⁴:

«Ժողովուրդի ձայնը» թերթը «Անապատի Մեծ Առաքյալը» խորագրով հոդված է հրատարակել Ռ. Հերյանի գործունեության մասին՝ նշելով, որ նա Հալեպ, Ադանա, Հոմս, Համա, Դամասկոս այցերից ու կազմակերպչական գործերից հետո մեկնում է Միջագետքի անապատներ, Դեր Ջոր, Խապուր, Սինճար: «Սօտ 7 ամիս կընէ որ ան անապատին մէջ անյայտացաւ: Որնէ լուր չի կայ իրմէ: Բայց ինչ հրաշք: Որբեր ու որբուհիներ կը հասնին շարան-շարան: Հալեպի որբանոցները կը լեցուին նորեկ այդ կէս արաբացած որբուկներով: Խեղճ աղջիկները որքան կըխպնին դեմքի կապոյտ խարաներէն»⁵:

Ռ. Հերյանն իր գործունեությունը սկսում է ֆրանսիացի պաշտոնյա գնդապետ Կլուսքարի տված հանձնարարականով: 1919 թ. նոյեմբերի 22-ին ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչությունը Ռ. Հերյանին գրում է. «Անապատի

¹ ՀԲԸՄ-ն հանգանակությունները բաշխելու համար ստեղծել էր Նպաստի հետևյալ հիմնադրամները՝ Տարագրյալների, Որբանպաստ, Որբապաշտպան, Հանդերձարանի, Վերաշինության:

² Տե՛ս «Միութիւն», նոյեմբեր-դեկտեմբեր, 1918, է տարի, թիվ 66, էջ 88:

³ «Ժողովուրդի ձայնը», 4/17 սեպտեմբերի 1919, Ա տարի, թիվ 285:

⁴ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 420, ց. 65, գ. 2, թ. 20:

⁵ «Ժողովուրդի ձայնը», 1/14 սեպտեմբերի 1919, թիվ 283:

հարեմներու մեջէն ազատելու նպատակաւ հայ որբեր, աղջիկներ, կիներ, եւ Կեդր. Վարչ. ժողովականները նկատելով, որ դուք կը զբաղուիք այնքան անձնուիրութեամբ, որոշեց ձեր տրամադրութեան տակ դնել 250 եգիպտական ոսկի»¹: Բացի այդ, 1919 թ. դեկտեմբեր 15-ին ՀԲԸՄ կենտրոնական հանձնաժողովը նամակով հանձնարարել է Սիրիայի և Կիլիկիայի տեղական մասնաժողովներին և քննիչներին, որ հնարավորություններ ստեղծեն Հերյանի գործունեության համար և ազատվածների վիճակացույցներ կազմեն²:

1919 թ. դեկտեմբերին Ռ. Հերյանը «Ժողովուրդի ձայնը» թերթերում ներփակ ներկայացրել է ազատագրվածների նոր անվանացուցակներ՝ սկզբում 82 հոգանոց, այնուհետև՝ ևս 7՝ նշելով, որ դրանք շարունակական են լինելու³:

Ըստ Ռ. Հերյանի տեղեկությունների՝ Եփրատի ափերին գտնվող Անագե ցեղի, Խաբուրի ափերին գտնվող Ճիտուր ցեղի և Սինջարի լեռներում բնակվող արաբների մոտ 5000 հայ որբեր կային: Նա ուխտել էր նրանց ազատագրել կամ իր կյանքը թողնել անապատներում: «Եթէ գործը զիս ձգէ ալ՝ ես գործը չեմ ձգեր»⁴: Նրան հաջողվել էր անգլիական, ֆրանսիական իշխանությունների, ինչպես նաև արաբական աշխրաթների ղեկավարների ներկայացուցիչների հետ լավ հարաբերություններ հաստատել: Հերյանը համագործակցում էր նաև առևանգված հայ կանանց ու որբերին փրկելու նպատակով Ազգերի լիգայի ստեղծած հանձնախմբի լիազոր կոմիսար Կարեն Եփեփեի հետ:

Ռ. Հերյանը չէր սահմանափակվում միայն որբերին ազատելով, հարկավոր էր նրանց կերակրել, հագցնել, բայց շատերը նորից փախչում էին իրենց արաբ ամուսինների մոտ, կամ արաբները, չհամակերպվելով որբերին հանձնելու գաղափարին, կրկին առևանգում էին նրանց: «Նա իր ազատած որբերը կը սիրէ անոնց աղտոտած աչքերը լուսալով և միասին կառք նստելով: Շատ անգամ ինք կը քալէ, որպէս զի կառքին մեջ տեղ մնայ որբերուն: Անօթի կը մնայ՝ վերջի պատառիկը հրամցնելով նորագատ սանին: Նրա համար մեկ հայու կեանքը ինքնին սրբութիւն մըն էր»⁵:

1919 թ. սեպտեմբերին 9-ի «Հայ ձայնը» անդրադառնում է Հայ ռամկավար կուսակցության՝ Ադանայի կենտրոնական ակումբում կազմակերպած հավաքին, որին ներկա էին Ռ. Հերյանը, Հ. Ոսկանը, Հալեպի ակումբի ղեկավարն ու Քեշկեկյանը: Հերյանն այստեղ ներկայացրել է իր գործի բարդությունները և կոչ արել շարունակական դարձնել որբահավաք գործը: Այդտեղ կազմակերպված հանգանակությամբ հավաքված 900 ոսկին նախատեսվում

¹ ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 33, թ. 1:

² «Միութիւն», նոյեմբեր-դեկտեմբեր, 1919, Ը տարի, թիվ 72, էջ 87:

³ «Ժողովուրդի ձայնը», 3/16 դեկտեմբերի 1919, Բ տարի, թիվ 359:

⁴ Նույն տեղում, 1/14 սեպտեմբերի 1919, Ա տարի, թիվ 283:

⁵ Նույն տեղում:

էր ծախսել միայն հայ մնացորդները ազատելու համար¹:

«Ժողովուրդի ձայնը» թերթին տված հարցազրույցում Ռ. Հերյանը խոսել է իր առաքելության մասին: «Ֆրանսիական սպայի հագուստով տարեց սպան», ինչպես նշում է հոդվածագիրը, ներկայացնում է Կ. Պոլիս իր այցի նպատակը, որն էր Դեր Ջորի և նրա շրջաններում գտնվող հայ խլակների ազատագրման նպատակով հանգանակության կազմակերպումը: Նա ծրագրել էր բանախոսել Կ. Պոլսի տարբեր թաղամասերում և ներկայացնել իրավիճակը: Հարցազրույցում նա անդրադարձել է նաև անգլիական և ֆրանսիական իշխանությունների օժանդակությանը, որոնք հոգացել են Մոսուլից Հալեպ 500 տարագիրների իր կազմակերպած փոխադրության ծախսը: Ռ. Հերյանը Մոսուլի որբանոցի մոտ չորս հարյուր որբերի տեղափոխել է Բաքուրա, ուր շուրջ 22.000 հայություն կար:

Բաքուրայից Դեր Ջոր վերադառնալուց հետո Ռ. Հերյանին անգլիական իշխանությունները կրկին օժանդակել են, իսկ Բաղդադի «Տարագրելոց մարմինը» ևս նրան որոշ գումար է հատկացրել: Այս ժամանակահատվածում նա շրջել է Խապուրի, Եփրատի, Շամաթիայի, Խրեյթայի, Ջազիրայի շրջաններում, որտեղ վրանաբնակ արաբների մոտ հանդիպել է բազմաթիվ հայ աղջիկների ու երեխաների: Այս ժամանակաշրջանի գործունեության վերաբերյալ նա գրել է. «Նրանցից ոմանց կը գնէի դրամով, ուրիշներ կը վախցնէի, ոմանց կը համոզէի: Այս կերպ կըրայ ազատել 400-մօտ մանչ և աղջիկ, հարիւրին 60 աղջիկ, 40 մանչ»²: Ռ. Հերյանին որբահավաք աշխատանքներում աջակցել են ՀԲԸՄ ապաստարանի տեսչուհի օրիորդ Սեֆերյանն ու Գոհար Պոյաճյանը: Վերջինս նրա անձնվեր գործակիցն էր: Նա սկզբում եղել է Դեր Ջորի որբանոցի տնօրենը, իսկ այնուհետև գործունեությունը շարունակել է Հալեպում³:

«Փրկենք անապատի որբերը»⁴ խորագրով բանախոսության ընթացքում անգամ նա անդրադարձել է անմարդաբնակ վայրերում ապրող երեխաներին. «Լսած էք սրտագրավ պատմութիւնը այն տասնեակ մը հայ մանուկներուն, որոնք պատերազմի չորս տարիներուն Տաւրոսի լեռներուն մէջ ապրեցան որպէս վայրի երէներ: Եւ երբ Անգլիացիք գտան զանոնք, ոչ մէկ լեզու կը խօսէին անոնք, և միայն խոստով կը սնանէին: Սակայն առաջին անգամ երբ մարդու երես տեսան, անոնք խաչակնքեցին իրեց երեսը: Այս նշանն էր Արևմտյան Աշխարհին յայտարարելու թէ՛ եթէ մենք վայրենացած ենք, եթէ մենք հացի տեղ խոտ կուտենք, բայց մենք Հայ քրիստոնէաներ ենք»⁵:

Ռ. Հերյանն իր բանախոսություններում պնդում էր, որ հարկ է ոչ միայն

¹ «Հայ ձայն», 9 սեպտեմբերի 1919, Ա տարի, թիվ 205:

² «Ժողովուրդի ձայնը», 4/17 սեպտեմբերի 1919:

³ Նույն տեղում, 14/27 հունիս, 1920, Բ տարի, թիվ 518:

⁴ Նույն տեղում, 7/20 սեպտեմբերի 1919, Ա տարի, թիվ 288:

⁵ Նույն տեղում:

հայության վերապրող բեկորները փրկել, այլև անապատներում ցրված ոսկորները հավաքել, Հայաստանի տարբեր վայրերում թաղել ու նրանց վրա արձանագրել Դեր Ձորի ոճիրը¹:

Հայաստանի ազգային արխիվի Ռ. Հերյանի անձնական ֆոնդում պահպանվել են Դեր Ձորից նրա գրած և ստացած նամակները, Դեր Ձորի շրջանում հայ երեխաների, հիմնականում աղջիկների և կանանց ցուցակները, որտեղ նշված են երեխայի տարիքը, անունը, արաբական անունը և ամենակարևորը՝ ցեղի և այն անձանց անունները, որոնց մոտ գտնվել էր երեխան: Օրինակ՝ Խաբուրի Պասարա գյուղում՝ Համմեդ Ալ-Նեֆիի մոտ է գտնվել ութ տարեկան աղջիկ, Մուհամմադ Ալ-Հաջիի մոտ՝ 19 տարեկան, Աբդ Ալ-Շակիթի մոտ՝ ութ տարեկան, Մազհար Ալ-Մխթարի մոտ՝ 16 տարեկան, և այսպես շարունակ²:

1919 թ. հոկտեմբերի 11-ին Կ. Պոլսի Ազգային խնամատարության կենտրոնական վարչության հղած նամակում Ռ. Հերյանին դիմել են «հարգելի որբախույզ» և ներկայացրել Հալեպի, Մոսուլի և Դեր Ձորի շրջաններում գտնվող 20 որբերի հասցեները՝ նրանց փրկելու և հայությանը վերադարձնելու ակնկալիքով³:

Հալեպի հայ որբահավաք հանձնախումբը Ռ. Հերյանին էր ուղարկում գրություններ, որոնք պարունակում էին որոնման մեջ գտնվող տարագիր հայերի ցուցակները՝ նրանց անուն ազգանուններով: Շատերը խնդրանքներով դիմում էին Հերյանին՝ իրենց հարազատներին գտնելու համար կամ խնդրում տեղեկություններ հաղորդել նրանց մասին: Երբեմն հայտնվում էին նրանց անունները, գտնվելու վայրը: Օրինակ՝ 1919 թ. դեկտեմբերի 8-ին Հերյանին հայտնում են, որ 13-ամյա Թագուհի Մասիսյանը գտնվում է Դեր Ձորի փաստաբան Նուրի էֆենդիի տանը: Առավել ազդեցիկ մարդկանց մոտ գտնվող երեխաներին վերադարձնելու համար հիմնականում դիմում էին Հերյանին՝ հաշվի առնելով նրա հեղինակությունը:

Ռ. Հերյանը ֆինանսական լրացուցիչ միջոցներ հայթայթելու նպատակով Ադանայում, Պոլսում, Փարիզում, Նյու Յորքում կազմակերպում է բանախոսություններ, հանգանակություններ: Պարբերական մամուլում տպագրված նրա հոդվածները պարտադրող էին: «Որբերու օրը» հոդվածում նա գրում էր. «Ես ալ, որպես համեստ գործող մը, կոչ կ'ուղղեմ ամէն անոնց, որոնք հայ անունը կը կրեն և հայուն արիւնը կ'եռայ իրենց երակներուն մէջ և կ'ըսեն. «Օգնեցէ՛ք որբերուն»: Ամէն հայու բաղձանքն է որ բոլոր գերի վարուած որբերը ազատագրուին, բայց դժբախտաբար անոնց խնամատարութեան գործը համապատասխան չէ մեր բաղձանքին»⁴: Նա իր բանախոսու-

¹ Նույն տեղում:

² ՀԱԱ, ֆ. 420, ց. 65, գ. 35, թ. 7:

³ Նույն տեղում, գ. 28, թ. 1:

⁴ «Ժողովուրդի ձայնը», 14/27 հունիսի 1920, Բ տարի, թիվ 578:

թյուններից մեկի ժամանակ փաստում է, որ անապատներից ազատագրված շատ աղջիկներ ու որբեր փախել են և վերադարձել իրենց տերերի մոտ, որովհետև «նպաստներու անբաւարարութեան պատճառով, պէտք եղած խնամքէն զրկուեցան»¹: Նրա հորդոր-խնդրանքը մեկն էր. «Հայ ժողովուրդ, ողորմութիւն տալու պէս մի օգներ որբին, այլ նկատէ թէ քու գաւակդ է ան, և տուր անոր, ինչ որ լաւագոյն կերպով կրնաս ... Վայ այն հայուն որ չըմբռնէր այս օրուան մեծութիւնը և իր լաւագոյնը չըներ»²:

Ի դեպ, Ռ. Հերյանի գործունեությունը կարճ ժամանակով ընդհատվել է Սիրիայում տիրող քաղաքական իրավիճակի պատճառով³: «Ժողովուրդի ձայնը» թերթը տեղեկացրել է այդ մասին ու տպագրել նրա՝ Հալեպից ուղարկած նամակը. «Տիրող պայմաններու տակ գործելը անկարելի է. եթէ կառավարութիւն մը հաստատվի արդարութեան վրա հիմնուած, մեծ յոյս ունիմ որ արաբները իրենք լավագոյնը պիտի ընեն արդարութիւն ընելու Հայերու և անոնց սրտահատորները հաւաքելուն մեջ մեծապէս պիտի օգնեն ... իմ յոյսս մեծ է, ես պիտի յաջողիմ ազատագրուածներու կարավաններ ուղարկել դէպի հայրենիք»⁴:

1920 թ. դեկտեմբերի 13-ին «Որբերու օրը Բարիզի մէջ» միջոցառումների շրջանակում Փարիզի սրահներից մեկում Պողոս Նուբարի նախագահությամբ տեղի է ունեցել նիստ, որտեղ ելույթ են ունեցել Կիլիկիայից ժամանած Շ. Շիշմանյանն ու Ռ. Հերյանը: Վերջինս կրկին ներկայացրել է որբերի ծանր վիճակը, անդրադարձել Բարեգործականի որբանոցների վիճակին և կոչ արել ներկաներին հանգանակություն կատարել: Աճուրդի են դրվել նաև որբերի հիշատակ-իրեր: Արդյունքում հավաքվել է 22.398 ֆրանկ, որի 10 հազարը նվիրել է Պողոս Նուբարը⁵:

1921 թ. Ռ. Հերյանը, վերադառնալով ԱՄՆ-ից, ՀԲԸՄ մասնաժողովի նախաձեռնությամբ հունիսի 21-ին բանախոսել է Կահիրեի Հայկական սրահում՝ «Դրուագներ որբերու կեանքէն» թեմայով: Նա կարողանում էր իր անձնական օրինակով ազդել հասարկության վրա, արտասահմանի հայության նկատմամբ իր հիասթափությունն էր հայտնում՝ նշելով. «Կը թուի շուտ մոռ-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

³ 1920 թ. հունվարի 6-ին Կլեմանսոն և Էմիր Ֆեյսալը Փարիզում ստորագրել են ֆրանս-սիրիական համաձայնագիր: Ազգային-ազատագրական պայքարն աստիճանաբար ուժեղանում էր: 1920 թ. մարտի 8-ին հայտարարվել էր Սիրիայի միասնական ու անկախ պետություն ստեղծելու և Էմիր Ֆեյսալին թագավոր հռչակելու մասին: 1920 թ. հուլիսի 24-ին Մայսալունի ճակատամարտն ավարտվում է ֆրանսիական զորքի հաղթանակով: Էմիր Ֆեյսալը հուլիսի 28-ին հեռանում է Դամասկոսից, իսկ օգոստոսի 1-ին՝ Սիրիայից: 1920 թ. ապրիլին Սան Ռեմոյի կոնֆերանսում որոշվում է Սիրիայի և Լիբանանի մանդատը հանձնել է Ֆրանսիային:

⁴ «Ժողովուրդի ձայնը», 12/25 փետրվարի 1920, Բ տարի, թիվ 417:

⁵ Նույն տեղում, 17/30 դեկտեմբերի 1920, Գ տարի, թիվ 676:

ցած ըլլայ հայ որբը և իր պարտականութիւնը դէպի հայ տառապանքը»¹: Տարբեր տեղերում հանդիպում ենք նրա այն տեսակետին, թէ «միայն հայուն դրամը կրնայ հայ որբը կշտացնել»²:

«Միութիւն» թերթն իր հաջորդ համարում հայտնում է Ռ. Հերյանի մահվան լուրը. «Մրտի խոր կսկծանքով մը կ'արձանագրենք անակնկալ մահը մեր սիրելի բարեկամ Տ. Ռուբէն Հերեանի, Գահիրէի մէջ, 7 հուլիս»³: Այսպիսով, Ռ. Հերյանը կարճ ժամանակահատվածում կարողանում է բավականին արդյունավետ գործել, և ինչպէս «Ժողովուրդի ձայնը» թերթն է նշում, շուրջ 1000 որբ ու որբուհի իրենց կյանքի համար նրան էին պարտական⁴:

Որբերի հավաքման աշխատանքներ է իրականացրել նաև ուրֆացի Լևոն Յոթնեղբարյանը: Միջազգետքի անապատներում, մասնավորապէս Հաուրանում, Դեր Զորում որբահավաք իրականացնելու համար նա և իր թիմակիցներ Գևորգ Գալըմբեյանը, Սև Գրիգորը, Գրիգոր Բաբենցը որոշում են արաբական հեղափոխությունը ղեկավարելու համար Միրիա եկած Մեքքայի շերիֆ Հուսէյն իբն Ալիին նամակով տեղեկացնել հայերի կացության մասին և օգնություն խնդրել: Նա խոստանում է իր հնարավորությունների սահմանում ամեն ինչ անել հայերին օգնելու համար⁵:

1918 թ. ապրիլին նրանք սկսում են իրենց որոնողական աշխատանքները և դրան զուգահեռ մեկնում Ալ-Աքաբա՝ օգնություն խնդրելու հայկական կազմակերպություններից կամ անհատներից՝ Հայոց ցեղասպանությունը վերապրած, բայց դեռևս թուրքական բռնության տակ գտնվող հայերին փրկելու համար: Շերիֆը նրանց այս գործի համար փոխադրամիջոց է տրամադրում և տեղանքին ծանոթ ուղեկցորդ նշանակում: Նույն ժամանակահատվածում Ալ-Աքաբայում նրանք հանդիպում են Հովհաննէս Գըլըճյանին, ով նպատակադրված աշխատում էր Թաֆիլայի հայերին փրկելու և նրանց Եգիպտոս տեղափոխելու ուղղությամբ:

Եգիպտոսի հայ բարեգործական միությունը և Հայ ազգային միությունը նամակներով խրախուսում են նման առաքելության մեկնարկը և առաջարկում ղեկավար կազմ ընտրել: Խմբի ղեկավար է դառնում Լևոն Յոթնեղբարյանը⁶: Հ. Քելեջյանը ՀԲԸՄ խորհրդին ներկայացնում է հինգ մարդու անուններ, ովքեր երդվում են փրկել հայերին գերությունից՝ Լևոն Յոթնեղբարյան՝ Ուրֆայից, Եսայի Քերեշեքյան (Քրշքյան)՝ Սսից, Թաթևոս Ղարաքելյան՝ Ղարաքելից, Հարություն Ղերայան՝ Արդենից, Փանոս Ղարաօղլանյան՝ Զեյթու-

¹ «Միութիւն», մայիս-հունիս, 1921, Ժ տարի, թիվ 81, էջ 45:

² «Ժողովուրդի ձայնը», 1/14 սեպտեմբերի 1919, թիվ 283:

³ «Միութիւն», հուլիս-օգոստոս, 1921, Ժ տարի, թիվ 82, էջ 53:

⁴ «Ժողովուրդի ձայնը», 1/14 սեպտեմբերի 1919, թիվ 283:

⁵ Crows of the Desert, Memoirs of Levon Yotnakhparian, California, 2012, p. 32.

⁶ Նույն տեղում, էջ 49:

նից¹: Լ. Յոթնեղբարյանի և նրա թիմակիցների աշխատանքների մասին «Միութիւն» թերթը գրում է. «Նախ Զ. Բ. Ը. Միութեան, յետոյ Հայ Ազգ. Միութեան կողմէ Ագապա-Քերէքի շրջանին մէջ նպաստի եւ ազատագրումի գործին նուիրեցան հազուագիւտ արհասրտութեամբ եւ անձնագոհութեամբ, մասնակցելով շերիֆական բանակի զինուորական գործողութեանց եւ յաջողելով ազատել հարիւրավոր հայեր»²:

1918 թ. օգոստոսի 10-ին Աքաբա է հասնում Եգիպտոսի պատվիրակութիւնը, որը ղեկավարում էին Աբահ Բեդրոսյանը, Ստեփան Ստեփանյանը և Գիբգոր Արմուղյանը: Աբահ Բեդրոսյանը Լ. Յոթնեղբարյանի և նրա թիմակիցների հետ հանդիպման ժամանակ ասում է. «Ես իմ թիկունքին տեսնում եմ հինգ երիտասարդների, ովքեր, մազապուրծ փրկվելով մահից, կրկին վերադառնում են նույն տեղը՝ անտեսելով իրենց անձնական անվտանգութիւնն ու ֆինանսական ջանքերը, սա այն կետն է, որտեղ ես տեսնում եմ մեր առաքելության հաջողությունները... Դուք մեր պատմության առաջին Հայկական փրկության արշավախումբն եք»³:

Լ. Յոթնեղբարյանի ու նրա աջակիցների կողմից ստեղծվում է «Փրկության առաքելությունը», որն իր աշխատանքները սկսում է 1918 թ. օգոստոսի 21-ին Ֆեյսալի վստահված մարդկանցից մեկի՝ Չաքի բեյի խմբի հետ: Նա որոշ ցուցումներ էր տալիս հայ հետախույզներին, թե նրանք ինչպես պետք է պահեին իրենց թուրքերի հետ հնարավոր առերեսումից խուսափելու համար: Ջեբել Դրուզի ղեկավար շեյխ Հուսեյն ալ-Աթրաշը նրանց հավաստիացնում է. «Մենք ամեն ինչ կանենք հայերի փրկության և ազատության համար: Մենք կգոհաբերենք ամեն ինչ»⁴:

Հայ որբերին ազատելու գործընթացը դյուրին էր դարձնում 1919 թ. հունվարին Ֆեյսալի հրապարակած հրամանը, որը տպագրվել է նաև Հալեպի թերթերից մեկում՝ «Նորին գերագանցություն Էմիր Ֆեյսալի հրամանը հայ կանանց և նրանց երեխաներին վերադարձնելու կապակցությամբ» խորագրով, որտեղ նշվում էր. «Այսօր մենք գրել ենք Հալեպի ռազմական ղեկավար Ջաֆար փաշային, որ նա հնարավոր միջոցներ ձեռնարկի, թերթերում հայտարարություն տա, որ բոլոր նրանք, ովքեր իրենց մոտ պահում են հայ կանանց, երեխաների, աղջիկների, թաքցնում են նրանց ու չեն վերադարձնում իրենց հարազատներին կամ կառավարությանը, անմիջապես կենթարկվեն դաժան պատժի: Այս հրահանգի նպատակը նրանց գտնվելու վայրը պարզելն է: Նրանց վերադարձնողները կարժանանան իմ հարգանքին»⁵: Այս հրամանի

¹ Նույն տեղում, էջ 50:

² «Միութիւն», հունվար-փետրվար, 1919, Ը տարի, թիվ 67, էջ 6:

³ Crows of the Desert, Memoirs..., p. 52.

⁴ Նույն տեղում, էջ 65:

⁵ صفحات و وثائق من جريدة التقدم الحلبية عن الاحوال الارمنية والعربية في الدول والبلاد الشامية ، دمشق ، ص 324. العثمانية

մասին Ֆեյսալը նամակով տեղեկացրել է տեղական իշխանություններին, աշիրաթների ղեկավարներին:

Հալեպի շրջանի ռազմական ղեկավար Ջաֆար Ալ-Ասքարին, ի պատասխան Ֆեյսալի հրամանի, ուղարկել է հետևյալ գրությունը. «Պատիվ ունեցա տեղեկանալու Նորին մեծություն Ֆեյսալի հրահանգին՝ հայ երեխաներին, կանանց, աղջիկներին վերադարձնելու վերաբերյալ: Այդ մասին տեղեկացվել են թերթերը, որոնք կգրադվեն հրահանգի տարածմամբ»¹:

Լ. Յոթնեղբարյանի նախաձեռնությամբ Ֆեյսալի նամակի կրկնօրինակը տարածվել էր Հաուրանի ամբողջ տարածաշրջանում: 1919 թ. հունիսի 25-ին Ֆեյսալը հրամանագիր է ստորագրել, որով Լ. Յոթնեղբարյանին թույլ էր տրվում Հաուրանի և հարակից շրջանի հայերին երկաթուղային ճանապարհով Դերա կամ Դամասկոս տեղափոխել անվճար²: Հետագայում շուրջ չորս հազար հայեր տեղափոխվում են Դամասկոսի վրանաքաղաք:

«Միութին» թերթը «Ազատագրուած հայեր» խորագրով հոդվածում գրում էր. «Ճեպլը Տիւրգի, Հաւրանի, Տէրայի և Քէրէքի շրջաններէն հաւաքուած և Դամասկոսի Հայկական Գաղթավայրը փոխադրուած 2026 տարագրեալներու և գաղթականներու ցուցակը ստացանք»³:

Տարագիրներին Դամասկոս տեղափոխելուց հետո Լ. Յոթնեղբարյանը Կարապետ Գավաֆյանի, Եսայի Կերեշեքյանի և Հովհաննես Գավաֆյանի հետ վերսկսում է իր որբահավաք գործունեությունը. «Գյուղից գյուղ, տնից տուն, անապատից անապատ մենք հավաքում էինք հայ որբերին և ուղարկում հայկական որբանոցներ կամ Դամասկոսի ապաստարաններ: Համայակ Ուղուրյանը ղեկավարում էր ապաստարանի գործերը և անձամբ վճարում նրանց խնամքի համար»⁴: «Միութին» թերթից տեղեկանում ենք. «Դամասկոսի մէջ Եօթնեղբայրեան արշաւախումբը վերջերս Հաւրանի մօտ քանի մը կարեւոր ազատագրումներ ևս ըրաւ և 20-ի չափ որբեր յանձնուեցան Հ. Բ. Ը. Միութեան Դամասկոսի Որբանոցին»⁵:

Այդ ընթացքում Լ. Յոթնեղբարյանն ու Անդրանիկ Գենճյանը հանդիպել են էմիր Ֆեյսալին՝ ներկայացնելով առաքելության նպատակը՝ կանխել այն մարդկանց ինքնության կորուստը, ովքեր գտնվում են արաբների տներում: Ֆեյսալը Լ. Յոթնեղբարյանին ազատ գործելու փաստաթուղթ է տրամադրել, որին հաջորդել է մամուլում տպագրված հայտարարությունը, որը որբահավաքի գործն ավելի արդյունավետ է դարձրել. «Ովքեր իրենց տներում ունեն հայ որբեր,

(Հալեպի «Աթ Թակադդում» թերթի վավերագիր էջերը հայերի ու արաբների վիճակի մասին Օսմանյան պետության մեջ ու Միրիայում, Դամասկոս, 1992, էջ 324):

¹ Նույն տեղում:

² Crows of the Desert, Memoirs..., p. 82-83.

³ «Միութին», նոյեմբեր-դեկտեմբեր, 1918, է տարի, թիվ 66, էջ 84:

⁴ Crows of the Desert, Memoirs..., p. 97.

⁵ «Միութին», հուլիս-օգոստոս, 1919, Ը տարի, թիվ 70, էջ 51:

պետք է նրանց հանձնեն Լևոն Յոթնեղբարյանի ղեկավարած կոմիտեին»¹:

Դերայում Լ. Յոթնեղբարյանի գործունեությանն է անդրադառնում «Որբունի»։ Այն պարբերաբար ներկայացնում էր Հաուրանի շրջանում մուսուլմանների մոտից Լ. Յոթնեղբարյանի խմբի հավաքած որբերի անուններն ու լուսանկարները։ Նամակով տեղեկացնում էր նրանց վիճակը, կրկին կոչ անում մուսուլմանների մոտ պահված որբերի մասին տեղեկություններն իրեն հաղորդել²։ Իր խմբի ջանքերով ազատված երեխաներին նա հանձնում էր Դամասկոսի ազգային որբանոց՝ նշելով. «Այդ դժբախտներէն շատերը իրենց անունը, մականունը, ծնողքը բնաւ չեն յիշեր եւ այդ ուղղութեամբ եղած հարցումներուն կը պատասխանեն արաբերէնով»³։ Թերթի նույն համարում տպագրվել է Լ. Յոթնեղբարյանի ջանքերով Հաուրանից հավաքված որբերի ցանկը, որտեղ նշված են նրանց անունը, ազգանունը, եթե հիշում են՝ ծննդյան վայրը, ծնողների անունները, իսկ վերջում՝ ինը հոգու ցուցակ, ովքեր իրենց ինքնության մասին տեղեկություններ չունեն⁴։

Իր հուշագրության վերջում Լ. Յոթնեղբարյանը, ամփոփելով իրենց որբահավաք գործունեությունը, նշում է. «Մենք ամեն ինչ արեցինք վերադարձնելու համար հայ որբերին, բայց հազարավորներին մենք փրկել չկարողացանք, նրանք մուսուլմաններ ու արաբներ դարձան, ինչը մեծ կորուստ էր մեր ազգի համար»⁵։ Իսկ արդեն 1920 թ. գարնանը Էմիր Ֆեյսալը, հաշվի առնելով Սիրիայում տիրող քաղաքական անկայուն իրավիճակը, խնդրում է Լ. Յոթնեղբարյանին ժամանակավորապես դադարեցնել որբահավաք աշխատանքները։

Անհատ որբախույզներից ակնառու գործ է կատարել գեյթունցի վերապրող Փառնակ Շիշիկյանը (Ահմեդ Ալ-Ջազզա), ով իր արաբական անունը ժառանգել է իրեն պահած արաբ ընտանիքից։ Փառնակը որպես ուղտապան շրջում էր անապատներում։ Օգտագործելով հայ որբերին տարբերակելու ձիրքը՝ նա գաղտնի ցուցակագրել է նրանց։ Փառնակի համար վճռորոշ է եղել Հալեպում 1924 թ. հանդիպումը իր դասընկեր Փանոս Նորաշխարհյանի հետ, ով արաբների ու քրդերի մոտ ապաստանած հայ երեխաների որոնման հանձնաժողովի նախագահն էր։ Նրա կազմած շուրջ 500 հայ որբերի անուններով ցուցակ-տետրը տեսնելուց հետո Հայ որբերի որոնման հանձնաժողովը նիստ է հրավիրել, որտեղ որոշվել է ցուցակում եղած անուն-ազգանունները բազմացնել և փակցնել եկեղեցիների, հայկական թաղամասերի ու հիմնարկների դռներին։ Այս հայտարարությանը հաջորդում են բազմաթիվ դիմում-խնդրանքներ. «Մենք պահանջում ենք մեր հարազատներին, պատ-

¹ Crows of the Desert, Memoirs..., p. 98.

² «Որբունի» Տեղեկատու հայ որբախնամ ընկերության, Ալեքսանդրիա, 1920, Բ. Տարի, թիվ 9, էջ 156-157:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

⁵ Crows of the Desert, Memoirs..., p. 113.

րաստ ենք ամեն ինչով ապահովել նրանց: Կվճարենք հանձնաժողովի կատարած բոլոր ծախսերը, կանենք նվիրատվություններ»¹:

Որբահավաքի իրականացման խնդիրները քննարկելու համար Փառնակը հանդիպել է Հալեպի եկեղեցական թեմի առաջնորդին, ինչպես նաև հայ կուսակցությունների ղեկավարներին: Որոնման հանձնաժողովը հավաքման գործը շարունակելու համար նրան որոշակի գումար է տրամադրել ու հանձնարարել զգույշ գործել, անգամ առաջարկություն է եղել անապատներում հավաքակայանի նման տեղ ստեղծել արաբ ընտանիքներից փախուստի դիմած մարդկանց համար²:

Փառնակ Շիշիկյանը վերադառնում է անապատներ՝ իր գործը շարունակելու: Նրա կազմած ցուցակներով ու քարտեզներով Հալեպի ազգային խորհրդի և կառավարության միացյալ հանձնաժողովը սկսում է աշխատանքները՝ արաբ ցեղապետներին ևս մասնակից դարձնելով որբերի հավաքման գործին: Ըստ արաբական ավանդույթի՝ որբերի համար ընդունված էր վճարել այսպես կոչված կաթի փող՝ ամեն անձի համար հինգ ոսկի: Սա այդ ժամանակների համար բավականին մեծ գումար էր, բայց Հալեպի ազգային ֆոնդը հանգանակությունների և նվիրատվությունների շնորհիվ զգալի միջոցներ էր ձեռք բերել: Այդ գումարը ստացող ցեղի ներկայացուցիչը մեկ ոսկին պետք է հանձներ ցեղապետին, իսկ բացի այդ՝ հանձնախումբը պետք է նրան վճարեր ևս երկու ոսկի:

Փրկագնված երեխաները Հալեպ և Բեյրութ էին տեղափոխվում հայ մեքենատերերի աջակցությամբ: Այս գործի նվիրյալներից էին Եղիա Ալաջաջյանը, Աբրահամ Շիշմանյանը, Սինանյան եղբայրները³: Որբահավաք գործն իրականացվում էր նաև հայրենակցական միությունների, ֆրանսիական և անգլիական ներկայացուցիչների պաշտոնական օժանդակությամբ:

«Հայ ձայն» թերթի «Որբահաւաքները» հոդվածից տեղեկանում ենք, որ Կ. Պոլսում կազմված Մնձուրի հայրենակցական միության անդամներ Կ. Արխանյանը, Սարիտիրոս Տեմիրճյանը, Նշան Վեվեյանը, Գաբրիել Քեշիշեյանը իրենց ծննդավայրի և դրան հարակից բնակավայրերի որբերը հավաքելու համար մեկնել են Միջագետք: Սկզբում նրանք մեկնել են Մոսուլ, հետո բաժանվել են: «Ասոնցմէ մին կը գտնուի այժմ Հալեպ, ուրիշը մը Տիգրանակերտ, և Պ. Արծանեան հոս եկած էր վերջերս Պոլիսէն նոր հրահանգներ ստանալու համար»⁴: Թերթը տեղեկացնում է. «Մինչև հիմա այս որբահավաք մարմինը հավաքել է մօտ 80 որբեր որոնցմէ տէր ունեցողները դրկուած են Պոլիս, իսկ անտէրները յանձնուած են որբանոցների Վարչութիւններուն»⁵:

¹ Ճղյան Հ., Սովերում մնացած կյանք, Երևան, 1991, էջ 22:

² Նույն տեղում, էջ 22-23:

³ Նույն տեղում, էջ 25:

⁴ «Հայ ձայն», 15 օգոստոսի 1919, Ա տարի, թիվ 197:

⁵ Նույն տեղում:

Որբահավաքի գործում նշանակալի աշխատանք են նաև իրականացրել սերաստացի Վաղարշակ Մեծմորուքյանն ու չայ-քուրդցի տիկին Սողիկ Նիկողոսյանը: Նրանք գրեթե 800 որբեր ու որբուհիներ են հավաքել անապատներից և քարավաններով բերել Սուրուճ: Տեղի բաղդադցի արաբ կայմականը նրանց հովանավորել է և գործունեության հնարավորություններ ընձեռել¹:

Հնչակյան գործիչ Էսկիշեհիրցի Աբրահամ Գարակեոզյանը նույնպես իր ջանքերով Դեր Ջորի և Միջագետքի տարբեր վայրերից բազմաթիվ որբեր ու որբուհիներ է ազատել²: Ռաքքայից մինչև Դեր Ջոր, Ռաս ուլ-Այն և մինչև խոր անապատներն անձամբ շրջելով ու իրեն սպառնացող վտանգներն արհամարհելով՝ հարյուրավոր որբեր, կանայք ու աղջիկներ է հավաքել ու Հալեպ տեղափոխել: Նա իր անձնվեր գործի համար «Հայ ազգային միութեան եւ Գօլօնէլ Կլուսքառի շնորհակալութեան և գնահատումին արժանացաւ, թէւ ինք այդ իսկ պատճառով նիւթապէս փճացաւ, ու իր զաւակներովը այսօր թշուառ կեանք մը կը քաշքշէ»³:

1918 թ. Հալեպի ազատագրումից հետո Ռաքքայում շուրջ 200 տուն հայեր կային: Հայոց ներգաղթի գործն ինչ-որ չափով ստանձնել էր ֆրանսիական կառավարությունը: Հալեպ ներգաղթի տեսուչ Կլուսքարը, աջակից ունենալով Հայ Ազգային Միությանը, վերապրող հայությանը անապատներից Հալեպ փոխադրելու համար տարբեր վայրեր խուզարկու պաշտոնյաներ և որբահավաք իրականացնող անձանց էր ուղարկում: Դեղագործ Սարգիս Սեյանը, որն այդ ժամանակ Ռաքքայում էր, հանձնախումբ է ստեղծում տարագիր հայերին Հալեպ տեղափոխելու համար, որի անդամներն էին սասունցի հացագործ Հովհաննես աղան, բեյլանցի սափրիչ Պետրոսը, արաբ վերնախավից մի քանի հոգի: Նշենք, որ սասունցի Հովհաննեսը շուրջ տասը որբ էր որդեգրել⁴: Սարգիս Սեյանի ու Պետրոսի մասին Կ. Գաբրիելյանը նշում է. «Կ'ելլեն արաբ վրանները, բազմաթիւ կիներ, աղջիկներ, մանուկներ հաւաքելով կը ճամբեն Հալէպ»⁵: Այս գործում նրանց աջակցել է տեղի արաբ ավագանին, որի համար հանձնաժողովը հատուկ շնորհակալություն է հայտնել: Ռաքքայի Հաջիբ Հասան Աղա անունով մի արաբ բավական թվով որբեր և հայուհիներ է իր ծախսով Ռաքքայի կողմերից հավաքել, մեկ ուրիշ արաբ Մոսուլի և Դեր Ջորի միջև գտնվող անապատներից է հայկական բեկորներ հավաքել և հանձնել հայ որբահավաքներին⁶:

Ամասիացի Հարություն Պազայանի անհատական ջանքերով Սամոսա-

¹ Գուժկան Սեբաստիոյ Կ. Գաբրիէան, Եղեռնապատում Փոքրուն Հայոց եւ նորին Մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924, էջ 549:

² Նույն տեղում, էջ 393:

³ Նույն տեղում, էջ 505-506:

⁴ Նույն տեղում, էջ 479:

⁵ Նույն տեղում, էջ 505:

⁶ Նույն տեղում, էջ 549:

տի և Զեյնալի սարերից են որբեր հավաքվել: Կ. Պոլսից Քղիի, Բալուի, Երզնկայի, Չմշկածագի Հայրենակցական միությունները նույնպես որբահավաք կազմակերպող մարդկանց էին ուղարկել անապատներ¹:

«Հայ ձայնը» տեղեկացնում է. «Իրարգել անձնաւորութենէն մը ուրախութեամբ իմացանք, որ Իսթենտերունի գրաւման վաղորդայնին տեղոյն մէջ գտնվող գաղթական Տօքտ. Արամ և Կարապետ Պալեան ցիրուցան և խեղճուկ վիճակի մը մէջ գտնուող գաղթական կիներ և տղաքներ հաւաքելով հոգ ու խնամք շոայլած են անոնց անմիջական կարոտութիւնները թեթևացնելու համար և գրաւող ֆրանսական բանակին դիմելով անոնց առօրեայ օրապահիկը ապահովեր են»²:

Մերաստացիների ջանքերով մոտ 40 հայրենակցական միությունների մասնակցությամբ կազմվում է Միջգավառային միությունը, որը Հայ ազգային միության օժանդակ մարմինն էր: Հալեպի Միջգավառային միության անդամներն էին Գեր. Հ. Գրիգոր վարդապետ Փեհլիվանյանը, Եսայի Ուրֆացին, Սարգիս Սելյանը, Նշան Մաթոսյանը, Միհրան Նաջարյանը, Կարապետ Գաբիկյանը, Ռուբեն Աճեմյանը, Ղազարոս Մարտիկյանը³: Այս կազմակերպությունը Հայ ազգային միության հետ օժանդակում էր նպաստաբաշխ մարմիններին:

Որբահավաք աշխատանքներ է իրականացրել նաև Կ. Եփսեի որդեգիր Միսակ Մելքոնյանը, որն իր մասնակցությունն է բերել «Փրկության առաքելություն» գործին: Այդ նպատակով Միսակը Հալեպից դուրս էր մեկնում և փրկության գործի համար անապատներում հայ և արաբ գործակիցներ նշանակում: Նրա գործունեության մանրամասներն է ներկայացնում Հ. Չոլաքյանը. «Հայ որբեր ու որբուհիներ փրկելու նպատակով իր ղեկավարութեամբ կը կազմուին ձիավոր խումբեր, որոնք շրջելով տեղէ տեղ ու մինչև իսկ անցնելով Թուրքիոյ սահմանը հայեր կ'ազատագրէին»⁴: Միսակի աջակիցներից են եղել նաև Խաչիկ Հակոբյանը (հետագայում՝ Խաչատուր քահանա Կիրակոսյան) և մի խումբ սասունցի զինյալներ⁵: Նրանց որբահավաք գործը շատ արագ արձագանք գտավ անապատներում. շուտով շատ որբեր ու որբնայրիներ անգամ ինքնակամ էին ներկայանում ազատարար կենտրոններ⁶:

Դեռևս 1916 թ. կազմված «Տարագրելոց պաշտպան մարմին» անունով հանձնախմբին փոխարինում է ավելի մեծ լիազորություններ ունեցող Միջագետքի հայ տարագիրների հանձնախումբը՝ թեմի առաջնորդ Մուշեղ արք. Մերոբյանի նախագահությամբ: Այն ուներ հատուկ աշխատակիցներ,

¹ Նույն տեղում:

² «Հայ ձայն», 17 դեկտեմբերի 1918, Ա տարի, թիվ 26:

³ **Գուժկան Մերաստիոյ Կ. Գաբիկեան**, նշվ. աշխ., էջ 546:

⁴ **Չոլաքեան Յ.**, Քարէն Եփսիէ, Հայ Գողգոթային եւ վերածնունդին հետ, Հալեպ, 2001, էջ 151:

⁵ Նույն տեղում, էջ 53:

⁶ Նույն տեղում, էջ 51:

ովքեր թուրքերի տներից հավաքում էին առևանգված հայ օրիորդներին և կանանց: Հալեպցի Միհրան Միհրանյանը «բավականին գնահատելի գործունեություն մը ցուցահանած էր անվախ կերպով թուրքերու եւ արաբներու տներ մտնելով հայ օրիորդներ ու կիներ հանելու համար»¹: Նա ազատագրել է մոտ հարյուր որբ և ամուսնացել իր ազատած որբուհիներից մեկի հետ²:

Որբահավաք աշխատանքներ է իրականացրել նաև Լևոն Աճեմյանը, որը մասնակցել է Մոսուլից Հալեպ 315 հայ տարագիրների տեղափոխմանը: «Ժողովուրդի ձայնը», անդրադառնալով նրա գործունեությանը, գրում է. «Լևոն պեյ Աճեմեանը, որ դրուժեան տերն էր Միջագետքի արաբ ցեղապետներու շրջանակին մէջ: Նա արաբ շէյխերուն շէյխն էր, այս պատճառով ան յաջողեցաւ փոխադրել տալ եօթ օրուան մէջ այս կարաւանը՝ Մոսուլէն Հալեպ, Նուսէպիւնի գծով»³: Նրա մասին Ռ. Հերյանը գրել է, որ ներգաղթի ընդհանուր տնօրէն Կլուսքարը ուղարկել է անձնվեր մեկին՝ Լևոն Աճեմյանին, ով ազատագրվածների գործում մեջ բաժին ուներ, և հույս է հայտնել, որ նրա նման մարդիկ շատ լինեն, քանի որ անապատն անձայրածիր է⁴:

Առաջին աշխարհամարտից հետո Մոսուլի առևտրական Սարգիս Չաքմաքճյանի գլխավոր զբաղմունքը եղել է որբահավաք աշխատանքը, նրան հաջողվել է նաև մեծ թվով հայուհիներ փրկել արաբական հարեմներից⁵:

Սուլիմազ (Նենե) Դանիելյանը Մոսուլի մոտ գտնվող Շըրկաթ գյուղաքաղաքում հայ անասնաբույժի մոտ է աշխատել և այդ շրջանի գյուղերից ու անապատներից բազմաթիվ որբեր, այրիներ, անգամ ամուսնացած ու հղի կանայք է հավաքել և մեծ աշխատանք տարել նրանց հայկական ինքնություն վերադարձնելու գործում⁶:

Որբահավաք գործում կարևոր դեր են ունեցել չորս ուրֆացի՝ Խաչո Շաշոյանը, Պողոս Թաշճյանը, Ազիզը (ազգանունն անհայտ է), Ճընճըլյան ընտանիքի զավակը, ովքեր արաբական տարագ հագած, զինված Միրիայի անապատներում որբեր և այրիներ էին փնտրում, համագործակցում Ազգերի լիգայի հանձնախմբի հետ⁷:

Ուրֆայի հերոսամարտի հերոսուհի Խաթուն Քեթենճյանի ավագ եղբայրը և քույրը՝ Էմիրզե Քեթենճյանը, ու տիկին Լուսիա Եսայան-Քեթենճյանը եղել են Ուրֆայի Որբահավաք հանձնախմբի անդամներ: Տիկին Լուսիան թուրքերի և արաբների մոտից որբեր ու երեխաներ է ազատել և որբանոց

¹ Վարդանեան Ե., Անապատ և անապատ, Մուրբ Ղազար-Վենետիկ, 1923, էջ 104:

² Ազատյան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, Լոս Անձելըս, 1995, էջ 148:

³ «Ժողովուրդի ձայնը», 29 հոկտեմբեր/11 նոյեմբերի 1919:

⁴ Նույն տեղում, 3/16 դեկտեմբերի 1919:

⁵ Գեորգեան Կ., Ամենուն տարեգիրքը, Դ Տարի, Պէյրուօ, 1957, էջ 428:

⁶ Ազատյան Լ., նշվ. աշխ., էջ 148:

⁷ Նույն տեղում:

տարել: Այդ պատճառով թուրքերը նրա տան ուղղությամբ կրակ են բացել¹:

Ֆնտճագցի Խաթուն Չավուշը մասնակցել է Ֆնտճագի հերոսամարտին, 1915 թ. օգոստոսի 1-ին գաղթել է Համա-Հոմ ուղղությամբ: 1918 թ. հետո արաբների մոտից նա հայուհիներ է հավաքել՝ ստանալով Չավուշ տիտղոսը: Նա ավելի քան 500 հայուհիներ է ազատել մուսուլմանների տներից²: «Միութին» թերթը նույնպես անդրադարձել է Խաթուն Չավուշի գործունեությանը³:

Անապատների որբախույզների անուններն իհարկե այսքանով չեն սահմանափակվում: Եղել են անհատներ, որոնց գործունեությունը տեղ չի գտել ժամանակի մամուլում, հուշագրություններում կամ դուրս է մնացել մեր հոդվածի շրջանակներում ուսումնասիրված նյութերից: Այնուամենայնիվ նրանց ազգանվեր գործը գնահատանքի է արժանի թեկուզ և մեկ որբի՝ հայկական ինքնությունը վերադարձնելու համար:

Որբախույզներն իրենց աշխատանքի ժամանակ հանդիպում էին բազմաթիվ դժվարությունների: Դրանցից կարելի է նշել անապատի արաբների հոգեկերտվածքը. նրանք իրենց ձեռքն ընկած հայ որբերի ու կանանց նկատմամբ սեփականատիրական զգացումներ ունեին: Այս կապակցությամբ Ռ. Հերյանը նշում է. «Արաբը շատ նենգամիտ է և չուզեր յանձնել բաղդով տիրացած իր հարստությունները: Ինչքան խարդախություններ կ'կիրարկե անապատի այդ գաւակը: Ան կ'արհամարհէ ամէն բռնի ոյժ: Միայն դրամը կրնայ զինքը համոզել» կամ՝ «արաբը չի վախնար ոչ գլխակաւորէ, ոչ կնգուղաւորէ ոչ ալ դարավերջիկ գարգամնակ* ունեցողներէ»⁴:

Որբախույզները գիտակցում էին, որ ազատագրման գործը ծայրաստիճան շրջահայացություն է պահանջում: Չնայած նշված բարդություններին՝ որոշ որբահավաք անձանց արաբական շրջանակներում հարգում էին, ինչը նվազեցնում էր խոչընդոտները⁵:

Անապատներում հայերին տարբերակելը նույնպես բարդ խնդիր էր: Ավելի փորձառու որբախույզները անգամ միայն դիմագծերից են գատորոշել նրանց: Եղել են դեպքեր, երբ Ռ. Հերյանի՝ որբերին հայությանը վերադարձնելու ջանքերն ապարդյուն էին անցնում, և նա դիմում էր այլ միջոցների: Վստահ լինելով, որ նրանք հայկական ծագում ունեն, Ռ. Հերյանը կեղծ նամակներ էր գրում որբերին ու կանանց՝ հայտնելով, թե իբր նրանց ազգականներն Ամերիկայից գումար են ուղարկել⁶: Օգնությունը տնօրինելու համար

¹ Նույն տեղում:

² «Որբունի», Տեղեկատու հայ որբախնամ ընկերության, Ալեքսանդրիա, 1919, Ա տարի, թիվ 8, էջ 123:

³ «Միութին», հուլիս-օգոստոս, 1919, Ը տարի, թիվ 70, էջ 51:

* Սաղավարտի, համազգեստի տարբերանշան, կոկարդ:

⁴ «Հայ ձայն», 6 սեպտեմբերի 1919, Ա տարի, թիվ 204:

⁵ «Ժողովուրդի ձայնը», 4/17 սեպտեմբերի 1919:

⁶ Նույն տեղում, 1/14 սեպտեմբերի 1919: Տե՛ս նաև «Հայ ձայն», 6 սեպտեմբերի 1919, Ա տարի, թիվ 204:

տվյալ անձը պետք է արձանագրեր իր անունը կառավարական ցուցակներում, որով հնարավոր էր լինում նրանց ինքնությունը պարզելը և հայությունը վերադարձնելը:

Որբախույզները գործում էին խիստ գաղտնի պայմաններում, հայտնաբերած երեխաներին միանգամից չէին բացահայտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններիս անմիջապես պահանջելը կարող էր վտանգ ստեղծել նրանց համար: Երեխաները ևս հոգեբանորեն պատրաստ չէին դրան: «Միութիւն» թերթը գրում է. «Զօրեղ, շատ զօրեղ, ջանքի կը կարօտի ազատագրումի այս գերազանցապէս նուիրական գործը, որ ունի բազմադիմի կնճիռներ»¹: Խոչընդոտներ ծագում էին նաև հայ որբերի ու աղջիկների կողմից: Նրանք վախենում էին, որ իրենց արաբ տերերը կարող են վրեժ լուծել իրենցից, կամ շարունակում էին հավատալ, որ հայկական կոտորածները դեռևս շարունակվում են: Արաբները սուտ լուրերով նրանց ավելի էին վախեցնում²:

Որբահավաք կազմակերպությունները, անհատները գիտակցում էին ստեղծված իրավիճակի պատեհությունը, որը տիրում էր 1918 թ. Մուդրուսի զինադադարից հետո: Սահակ Մեսրոպյն իր «Մինչև երբ պիտի սպասեն... օրերը կ'անցնին» հոդվածում ազատագրման խնդրի հարցում համակարծիք է Մուշեղ արքեպիսկոպոսի տեսակետին, որ պետք է շեշտը դնել անմիջական առաքելության վրա, այլապես «վաղը ուշ կլինի», մանավանդ եթե այդ պահին անգլիական նպաստավոր դիրքորոշումը նրանց հնարավորություն էր ընձեռում անապատներից դուրս բերել առավել թվով որբեր ու կանայք: Մինչդեռ իրադարձությունները կարող էին այլ ուղղությամբ զարգանալ, և հայությունը կարող էր կորցնել իր 30.000 վերապրողների ևս³:

Երբեմն անապատներից եկած որբերն ավելի թշվառ վիճակում էին հայտնվում, որի պատճառով վերադառնում էին: Ռ. Հերյանը Բերայում հանդիպում է մի պատանու՝ Սարգիս անունով, որին ինքն էր ազատել արաբների մոտից: Նա Կ. Պոլիս էր եկել, դերձակություն էր սովորել, բայց աշխատանք ու գիշերելու տեղ չունէր: Սարգիսը Հերյանին խնդրել է իրեն ևս Դեր Զոր տանել՝ հիմնավորելով՝ «Դուն մեզ լաւ կը նայէիր, հայրիկ»⁴:

Որբահավաք մարմինները Հալեպում, Դամասկոսում հավաքել էին մեծ թվով որբեր և կանայք: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ անգամ առաջարկություններ էին եղել այդ գործընթացը ժամանակավորապէս դադարեցնելու մասին, քանի որ «երբեմն նոյն իսկ ազատագրուածները անօթի և մերկ կը վերադառնան իրենց մահմետական տերերուն մօտ»⁵: Այդ նպատակով ՀԲԸՄ Կենտրոնական ժողովը որոշում է կայացրել Դամասկոսի օրինակով Հալե-

¹ «Միութիւն», մայիս-հունիս, 1919, թիվ 69, էջ 37:

² «Ժողովուրդի ձայնը», 1/14 սեպտեմբերի 1919:

³ Նույն տեղում, 30 օգոստոս/12 սեպտեմբերի 1919:

⁴ Նույն տեղում, 14/27 հունիսի 1920, Բ տարի, թիվ 518:

⁵ «Միութիւն», նոյեմբեր-դեկտեմբեր, 1919, Ը տարի, թիվ 72, էջ 88:

պում նույնպես հաստատել ապաստարան-աշխատանոց, ուր պետք է ընդունվեին ազատագրված որբերն ու կանայք:

Առաջին առերեսումը հայրենակիցների հետ արդեն մի քանի տարի անապատներում ապրած որբերի համար դժվար էր: Հերյանը կարողացել էր որոշակի փոփոխություններ մտցնել այդ ընթացակարգում: Օրենքը մինչ այդ պարտադրում էր, որ որբ երեխան կամ հարսը պետք է տեղում խոստովաներ իր հայ լինելը, սակայն Հերյանն ավելի լայն հնարավորություններ է ստեղծում ազատ արտահայտվելու համար. «Հինգ տարի արաբին քով մնացողներին թույլ տուին որ հինգ օր ալ գոնե իմ մոտս մնան: Ու անկե վերջ ոչ մեկ որբուկ չեղաւ որ իր ծնունդը ուրանար»¹: Հուշագրություններում բազմաթիվ են նման դեպքերը: Այս առումով բավականին տիպական է Արմենակ Բագուպեանի օրինակը, ով արաբների մոտ մնացել է մինչև 1918 թ: Նա անգլիական կառավարության ներկայացուցիչների մոտ արաբ հոր դրդմամբ հրաժարվել է խոստովանել իր հայ լինելը. «11-12 տարեկան տղեկ մը, ինչպես որոշում առնէի. որուն հաւատայի, բայց ինչ որ ալ ըլլար, ես ալ ինկլիզներուն վրայ վստահություն չունէի: Ես ավելի ապահով կը զգայի այս արաբներուն մոտ, որովհետև անոնց ընտանիքին մեկ անդամը դարձած էի այլեւս»²: Հետագայում, սակայն, նա զոջում է իր այս որոշման համար և գրում է. «13 տարի եւս մնացի օտարութեան մէջ. 12 տարեկան կտրիճ տղեկ մըն էի, որ գայլերէն չէր վախնար, սակայն հայ հաւաքող ձիաւորներէն կը կասկածէի»³:

Որբահավաք գործի գրավականներից մեկը ֆինանսական միջոցների ապահովումն էր, որի համար կատարվում էին հանգանակություններ, նվիրատվություններ: Մամուլում պարբերաբար կոչ էր արվում անտարբեր չմնալ և անսալ Հերյանի ու նրա նմանների կոչերին. «Տակաւին հինգ հազար որբեր կան անապատի Արաբներու քով: Պետք է ազատել և կարելի է ազատել զանոնք: Մէկ հայ աղջկան, մէկ հայ որբի փրկագին երկու ոսկեդրամ: Պարտական ենք ազատելու»⁴: «Անապատի որբերի փրկության ֆոնդը» հատուկ պունակ էր բացել «Ժողովուրդի ձայնը» թերթում: «Մեկ հայ երկու հնչուն ոսկի» կարգախոսը ժամանակի մամուլում առավել հանդիպող արտահայտությունն էր: Այս խորագրի ներքո պարբերաբար նշվում էին հանգանակություններ կատարող անձանց անուն-ազգանունները և գումարի չափը:

Ռ. Հերյանն իր բանախոսություններում ընդգծում էր. «Տեղացի վաչկատուն ցեղերը դրամի փոխարեն միայն կը յոժարին յանձնել իրենց քով գտնված հայ կիները ու որբերը: Մեկ որբը կարելի է առնել երկու օսմանյան ոսկի դրամով»⁵:

¹ «Ժողովուրդի ձայնը», 24 սեպտեմբեր/7 հոկտեմբերի 1919:

² Բագուպեան Ա., Ողջ մնալու գինը, Պէրոյթ, 1996, էջ 56:

³ Նույն տեղում, էջ 57:

⁴ «Ժողովուրդի ձայնը», 7/20 սեպտեմբերի 1919, Գ տարի, թիվ 288:

⁵ «Ժողովուրդ», 30 սեպտեմբերի 1919, Ա տարի թիվ 50:

Պարբերական մամուլի էջերում բացվում են նվիրատվությունների բաժիններ և անուն առ անուն ներկայացվում են այն անհատները, կազմակերպությունները, որոնք մասնակցում էին այդ նախաձեռնությանը: Հայ որբախնամի վարչական խորհուրդը 15 կետից բաղկացած հատուկ հրահանգներ է տպագրում մասնաճյուղերի ստեղծման, նրանց աջակցելու, որբերի խնամքը կազմակերպելու, անհատ մարդկանց այս գործին մասնակից դարձնելու և մի շարք այլ հարցերի վերաբերյալ¹:

Հայ Որբախնամի Որբախնդիր Մասնախումբը «Անհետացածներ» սյունակի տակ պարբերաբար տեղեկացնում էր. «Ամեն անոնց՝ որ որբի մը ուր կամ որու տունը գտնվիլը գիտեն՝ հաճին փոխանակ հասցեները լրացրած միջոցաւ ծանուցանելու, ուղղակի իմացնել Հայ Որբախնամի գրասենյակը, Բերա Ս. Երրդ. Եղեղեցվոյ շրջափակին մէջ»²:

Այսպիսով, 1918 թ. Մուղրոսի զինադադարից հետո բարենպաստ պայմաններ էին ստեղծվել Միջազգետքի անապատներից հայ որբերին ազատագրելու համար: Այս գործը ստանձնում են հայկական և միջազգային բազմաթիվ կազմակերպություններ, հայրենակցական միություններ ու անհատ որբախնույզներ: Նշենք՝ որբահավաք գործում աշխատող բոլոր անհատներն ու կառույցները գործել են փոխօգնության և համագործակցության պայմաններում՝ հաշվի առնելով անապատներում գործելու բարդությունները: Որբերին հավաքելու, փրկագին վճարելու, իսկ հետագայում գոնե նվազագույն պայմաններով ապահովելու գործը որոշակի ֆինանսական միջոցներ էր պահանջում, ինչը ստանձնում են տարբեր բարեգործական կազմակերպություններ, հայրենակցական միություններ: Երբեմն հայրենակցական միության ներկայացուցիչները Միջազգետք էին հասնում իրենց տարածքի որբերին հավաքելու, սակայն տեղում տեսնելով անապատներում, մուսուլմանների տներում դրանց քանակը՝ ընդլայնում էին իրենց գործունեության սահմանները:

Նշենք, որ Կ. Պոլսի անգլիական դեսպանատունը հայ որբերի վիճակացույց է կազմել, ըստ որի 1920 թ. դրությամբ նրանց թիվը հասնում էր 120.000-ի, որից մոտ 40.000-ը շարունակում էր մնալ գերության մեջ³: Որբահավաք աշխատանքները ժամակակալորապես ընդհատվել են 1920 թ.՝ պայմանավորված Միջին Արևելքի քաղաքական իրավիճակով, այնուհետև շարունակվել մինչև 1923 թ., որից հետո աստիճանաբար նվազել են: Ավելի ուշ մամուլում և հուշագրություններում եզակի դեպքերի ենք հանդիպում, երբ որբերը տարիներ անց արդեն չափահաս, աղոտ գիտակցելով իրենց ազգային ինքնությունը, լքել են արաբական միջավայրը: Ցեղասպանությունից 20 տարի անց նման երևույթի անդրադառնում է Արտավազդ արքեպիսկոպոս

¹ Նույն տեղում, 4/17 նոյեմբերի 1918, Ա տարի, թիվ 15:

² Նույն տեղում, 8/21 նոյեմբերի 1918, Ա տարի, թիվ 19:

³ «Որբունի», հունիս, 1920, Բ տարի, թիվ 10, էջ 206-207:

Սուրմէյանն իր «Երկու ազատագրեալ մէկ օրուան մեջ» հոդվածում¹:

Այսպիսով, հոդվածում ներկայացված որբախույզներով չի սահմանափակվում այն մարդկանց ցանկը, ովքեր այդ գործի նվիրյալներն են եղել: Հավանաբար կան անհատներ, որոնց անունները մեզ դեռևս հայտնի չեն, իսկ ոմանց մասին հանդիպում ենք սակավաթիվ տեղեկությունների:

Нарине Маргарян – *Армяне, занятые поисками сирот в пустынях Междуречья (1918-1923 гг.)*

В статье представлена деятельность людей, которые занимались поисками сирот в пустынях Междуречья в годы Геноцида армян и последующие годы и руководствовались девизом «Спасем сирот пустыни». Переодевшись, зачастую в одежды бедуинов, они блуждали по пустыням в поисках своих соплеменников, находили их, освобождали из арабского или курдского «плена» и передавали организациям, занимающимся предоставлением помощи сиротам. Была затронута деятельность Р. Херяна, Л. Йотнехбаряна, П. Шишикяна, Вагаршака Метсморукаяна, Абраама Гаракеозяна, внесших огромный вклад в дело, а также выявлены новые имена людей, занятых поисками сирот, целью их было вывести из пустыни по возможности большое количество армянских сирот.

Были представлены особенности работы людей, занятых поиском сирот, трудности, с которыми они сталкивались в ходе осуществления своей деятельности. Источниковой базой для изложения материала послужили периодическая печать того времени, мемуары и свидетельства очевидцев, а также материалы, хранящиеся в Академии наук РА и именном фонде Р. Херяна. Было также проанализировано освещение прессой деятельности, касающейся поиска сирот.

Narine Margaryan – *Armenians Searching for Orphans in the Mesopotamian Deserts (1918-1923)*

The article describes the activities of people engaged in the search for orphans in the Mesopotamian Deserts in the years of the Armenian Genocide and subsequent years. Their slogan was “Let’s Save the Orphans of the Desert”. They wandered through the deserts, often disguised in Bedouin robes, in search of their fellow compatriots, discovered them, released them from Arab or Kurdish “captivity” and handed them over to organizations involved in providing assistance to orphans. The article highlights the activities of R. Heryan, L. Yotneghbaryan, P. Shishikyan, Vagharshak Metsmorukyan, Abraham Garakeozyan, who made a tremendous contribution in this field, as well as new names of people engaged in the search for the orphans were revealed, whose goal was to withdraw as many of the Armenian orphans as possible from the desert.

The characteristics of the work of people engaged in the search for orphans, as well as the difficulties they encountered in the course of their activities, are presented. The newspaper periodicals of that time, memoirs and eyewitness accounts, as well as materials stored in the Academy of Sciences of the RA and the nominal fund of R. Heryan served as a primary source for the article. The press coverage of activities related to the search for orphans was also analyzed.

¹ «Հայաստանի կոչնակ», 19 հոկտեմբերի 1935, ԼԵ տարի, թիվ 42, էջ 995-996: